# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
## Протокол N 5

**«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

**Заседания оценочной комиссии процедуры закупки под кодом EQ-BMAPDzB-21/12**

Նիստի անցկացման՝
-վայրը՝Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.
-օրը՝ 01.06.2021թ.
-ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Առուշանյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Ումրոյանը, Վ. Հարությունյանը, Մ. Ասլանյանը, Դ. Նիկողոսյանը
Բացակայում է՝ Ա. Ստեփանյանը,
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

Место заседания: мерия г. Ереван (ул. Аргишти 1), комната 321
День, месяц, год заседания: 01.06.2021г.
Время заседания: 11:00ч.
Участвовали
Председатель комиссии В. Арушанян
Члены комисии Р. Умроян, В. Арутюнян, М. Асланян, Д. Никогосян
Отсутствует А. Степанян,
Секретарь комисии Г. Мурадян

### 1. Հայտերի գնահատման մասին

**Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին**

**Об оценках предоставленных заявок**

**Данные о наличии необходимых документов в каждом открытом приложении и их соответствие установленным требованиям**

---

(Վ. Առուշանյան, В. Арушанян)

Ընդունել ի գիտություն, որ «Ռաֆէլգրիգ» ՓԲԸ-ի կողմից 20.04.2021 թվականին ներկայացված բողոքի հիման վրա գնման գործընթացը օրենքի ուժով կասեցվել էր:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 20.05.2021 թվականի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/33 որոշման համաձայն՝ (կայքում հրապարակվել է 24.05.2021թ.) «Ռաֆէլգրիգ» ՓԲԸ-ի բողոքը մերժվել է ամբողջությամբ:

Принять к сведению, что 20.04.2021 г. на основании жалобы, представленной ЗАО «Рафэлгриг» 20.04.2021 г., процесс закупки был приостановлен силой закона:

Согласно решению ԳԲՔԱ-ԼՕ-2021/33 лица, рассматривающего жалобы, связанные с закупками РА, от 20.05.2021 г. (на сайте опубликовано 24.05.2021 г.) жалоба ЗАО «Рафэлгриг» отклонена полностью:

Ընդունել ի գիտություն, որ գնահատող հանձնաժողովի 20.04.2021 թվականի թիվ 1 արձանագրությունում տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ՝ «Նորտեքս Էնջինիրինգ» ՓԲԸ-ն հանդիսանում է ավելացված արժեքի հարկ վճարող և գնային առաջարկը ներկայացրել է նշված հարկատեսակով:

Принять к сведению, что в протоколе № 1 оценочной комиссии от 20.04.2021 г. была проведена техническая опечатка: ЗАО «Нортекс Энджиниринг» является налогом на добавленную стоимость и ценовое предложение представило по указанному виду налога:

1.1. Մասնակիցների կողմից ներկայացված և բացված հայտերում պահանջվող փաստաթղթերը առկա են.

В поданной участниками открытой заявке имеются все необходимые документы:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Принято решение: за - 5, против - 0.

1.2 Գնահատող հանձնաժողովը գնահատելով «Նորտեքս Էնջինիրինգ» ՓԲԸ-ի և «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ՝ մասնավորապես.

1) «Նորտեքս Էնջինիրինգ» ՓԲԸ-ի կողմից հայտով տրամադրված փաստաթղթերը վավերացվել են էլեկտրոնային թվային ստորագրությամբ Հովհաննես Սամվելի Հովակիմյանի կողմից, սակայն ներկայացված լիազորագրում սահմանված չեն վերջինիս կողմից փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացնելու լիազորությունները:

Միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված լիազորությունը Հովհաննես Հովակիմյանին տրամադրվել է «Նորտեքս Էնջինիրինգ» ՓԲԸ-ի փոխտնօրեն Վ. Պետրոսյանի կողմից, գնահատող հանձնաժողովը առաջարկում է տրամադրել ընկերության փոխտնօրենի կողմից լիազորագիրը տրամադրելու իրավասությունը հաստատող իրավական հիմքը:

«Նորտեքս Էնջինիրինգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված գնման առարկայի ամբողջական նկարագրում, ապրանքի մակնիշը նշված է, որպես «Щербинский», որը գնահատող հանձնաժողովի կարծիքով պահանջում է հստակեցում՝ արդյո՞ք նշվածը հանդիսանում է գնման առարկայի մակնիշ:

2) «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում գնման առարկայի տեխնիկական բնութագրով ներկայացվել է հետևյալ չափորոշիչները՝ «400կգ, դռների բարձրություն 2000 մմ, գլխավոր էլեկտրոշարժիչը VVVF համակարգ, արագությունը 1մ/վ, կանգառների քանակը՝ մինչև 16 կանգառ» և «630կգ, դռների բարձրություն 2000 մմ, գլխավոր էլեկտրոշարժիչը VVVF համակարգ, արագությունը 1մ/վ, կանգառների քանակը՝ մինչև 16 կանգառ», որը հիմնականում համապատասխանում է հրավերի պահանջներին բացառությամբ՝ «կանգառների քանակը՝ մինչև 16 կանգառ» չափորոշիչի, որը չի համապատասխանում հրավերի պահանջին:

«Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված գնման առարկայի ամբողջական նկարագրում, ֆիրմային անվան փոխարեն նշվել է գնման առարկայի բեռնատարողությունը, արտադրողի անվանումը՝ Չինաստան, որոնք չեն համապատասխանում հրավերի պահանջներին, ուստի ապրանքային նշանը ևս հաստատման կամ վերանայման կարիք ունի:

Միաժամանակ՝ ընկերության կողմից ներկայացված չեն հրավերով սահմանված այլ չափորոշիչները և պահանջները, ինչը չի համապատասխանում գնման ընթացակարգի հրավերում

պատվիրատուի կողմից սահմանված վերելակների ձեռքբերման տեխնիկական բնութագրի ամբողջական պահանջներին:

Оценивая требуемые по приглашению документы ЗАО «Нортекс Энджиниринг» и ООО «Григорян Шин», оценочная комиссия констатировала следующие несоответствия требованиям приглашения, в частности:

1. Документы, предоставленные ЗАО «Нортекс Энджиниринг», были заверены Ованесом Самвеловичем Овакимяном с электронной цифровой подписью, однако в представленной доверенности не установлены полномочия последнего ратифицировать документы электронной цифровой подписью:

В то же время, учитывая то обстоятельство, что вышеуказанное полномочие было предоставлено Ованнесу Овакимяну замдиректора ЗАО «Нортекс Энджиниринг» со стороны В. Петросяна оценочная комиссия предлагает предоставить правовую основу, подтверждающую правомочность предоставления доверенности заместителем директора компании:

В представленном ЗАО «Нортекс Энджиниринг» приложении 1.1 полное описание предмета закупки указана марка товара как «Щербинский», который, по мнению оценочной комиссии, требует уточнения, является ли указанное маркой предмета закупки:

2. В представленном ООО «Григорян шин» (приложение 1.1) с технической характеристикой предмета закупки представлены следующие критерии «400кг, высота дверей 2000 мм, главный электромотор система VVVF, скорость 1М/с, Количество остановок до 16 остановок» и «630кг, высота дверей 2000 мм, главный электромотор система VVVF, скорость 1М/с, Количество остановок до 16 остановок», что в основном соответствует требованиям приглашения, за исключением критерия «количество остановок до 16 остановок», которое не соответствует к требованию.

В представленном ООО «Григорян шин» приложении 1.1 в полном описании предмета закупки вместо фирменного наименования отмечена грузоподъемность предмета закупки, наименование производителя-Китай, которые не соответствуют требованиям приглашения, поэтому товарный знак также нуждается в подтверждении или пересмотре:

В то же время, компания не представила другие критерии и требования, установленные приглашением, что не соответствует требованиям технической характеристики приобретения лифтов, установленной заказчиком в приглашении к процедуре закупки.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Принято решение: за - 5, против - 0.

1.3 Գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով 1.2 կետով արձանագրված անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպմանն» Կարգի (այսուհետ՝ Կարգ) 41 կետով, որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել է մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Եթե սույն Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Принимая во внимание зарегистрированного в пункте 1.2 несоответствие к требованиям приглашения, оценочная коммисия руководствуясь пунктом 41 Порядка, утвержденного Постановлением Правительства РА N 526-N от 4 мая 2017 года, приняло решение о приостановлении заседания на один рабочий день и в электронном виде, уведомить об этом участников конкурса, предложив до истечения срока приостановки исправить зарегистрированные несоответствия. Если участник устраняет зарегистрированное несоответствие в срок указанный в пункте 41 настоящего порядка, его предложение считается удовлетворительным. В противном случае заявка участника будет признана неудовлетворительным и будет отклонена.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:
Принято решение: за - 5, против - 0.

1.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց շտկված փաստաթղթերի գնահատումն իրականացնելու նպատակով նիստ հրավիրել 2021 թվականի հունիսի 3-ին ժամը 11:00-ին:

Оценочная комиссия для оценки доработанных документов решила созвать следующее заседание 3-го июня 2021 года в 11:00 часов.

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.**
**Имена и фамилии членов комиссии, присутствующих на заседании.**

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի Комиссии | | |
| Նախագահ՝ Председатель | | Վ. Առուշանյան В. Арушанян |
| Անդամներ՝ Члены | | Ռ. ՈՒմրոյան Р. Умроян |
| | | Վ. Հարությունյան В. Арутюнян |
| | | Մ. Ասլանյան М. Асланян |
| | | Դ. Նիկողոսյան Д. Никогосян |
| Քարտուղար՝ Секретарь | | Գ. Մուրադյան Г. Мурадян |